39. ԼԱԼ ՊԱՏՔԱՄԱՎՈՐ

Զոռբա թաքավորըմ կէլնի: Պատքամավորըմ կճամխի ոտուշ թաքավորի մոտ: Էտ պատքամավոր իսկի խաբար չի տա: Գյետնի վերեն դիր էրթա, պիլոր եռըմ կքյաշի կկայնի:

Թաքավոր կկանչի ուր վազիրներ, ճոչ մարթեր, չեն կանա էտա լալ մարթուն ջուլաբ տա: Դալալ կուտա կանչել, թե. «Վով կանա էսա լալ մարդու ջուլաբ տա, թո զյա տա, էն ինչ ուզի՝ տամ»:

Ժողովրթի մեչեն մարթըմ վայդա կէլնի, կասի. - Ես ջուլաբ կուտամ:

Կառնեն, կտանեն պատքամավորի առաջ:

Պատքամավոր զյետին պիլոր կեռի:

Էս մարթ պիլորի կեստեղ եռըմ կքյաշի, պիլոր կանի խալալ կես: Պատքամավոր էրկու խատ սոխ կտնի պիլորի օրթեն:

Մարթ էրկու խատ խավու ծու կտնի վեր սոխին:

Պատքամավոր ճանգյըմ կորեկ կլլի վերեն:

Էն էլ էրկու խատ ահյլեոր կթոնի վեր կորեկին, կկիրիկուլի:

Պատքամավոր կսըռթոխի, ինատ կանի, կէրթա:

Թաքավոր որ կտիսնա էսա, ինատ կանի, էսա մարթուն կասի. - Աստծու սիրուն, ի՞նչ արիր, ի՞նչ ասիկիր, որ էսա մարթ ինատ արաս, կնա՞ս:

Մարթն կասի. - Էն լալ որ պիլոր եռես՝ ասել կուզեր. աշխար բիթուն զի, ես որ օրթալաղ տեղեն եռիկի, ասել ուզիկի, աշխրի կես մե, կես քյե: Էն պատքամավոր, որ էրկու խատ սոխ խրիր օրթեն, ասել կուզեր, որ մենք իրարու խետ կզեյշանանքյ: Ես որ էրկու խավու ծու տրի սոխի կուշտ ասել ուզեկի վերեն, թե կզյեշանանքյ: Էն էլ որ ճանգյըմ կորեկ լըսես վերեն, ասել կուզեր, թե. էսա կանդար ասքյար ունեմ, կպիրեմ ծե կկոտորեմ: Ես որ էրկու ահյլեոր թոդիկի վերեն, ասել ուզեկի, թե քյո ասքյրներ բիթուն ըսնա ճրի պես կխմեմ:

Թաքավոր կասի. - Աստված քյո տուն ավիրի, տու ինչի՞ շոտ չասիկիր, մարթ սըռթոխավ, կնա՞ս:

Մարթ կէօրեռխկեն իտե, աղաչանքյով, պաղատանքյով ետ կտառուկեն, շատ կաշառքյներ, շատ առիեքյ կուտան, սիրտ կզյնեն, նոր ճամխու կտնեն: